№ 203 Նոյեմբերի 21 (Դեկտեմբերի 3) 1879 Նոյեմբերի 21 (Դեկտեմբերի 3) № 203

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1880 թվին

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօների հետևեալ օրերից։

Լրագրի դիրքը և պրոգրամմեն նոյն են մնում։ Մենք ստանում ենք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվան 6 ռուբլ։ Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ՄԷՋ։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցէով ТИФЛИСЪ Редакція «Мшакъ.

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր գաւառական գործերը։—Ներքին տեսութիւն։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Կապոյտ տետրակ։ «Մասիսի» թղթակցութիւնը։ «Մասիսի» թղթակցութիւնը։ Արտաքին լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Հայ երիտասարդութիւնը։

ՄԵՐ ԳԱՒԱՌԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

—

«Մշակի» երէկվայ համարում տպեցինք Երևանի մեր թղթակիցներից մէկից հաղորդած լուրը թատրոնական ներկայացումների մասին։ Այդ լուրից և մեր մի ուրիշ թղթակցի գրած մանրամասն նամակից, որ կը տպենք հետևեալ համարներից մէկի մէջ, մենք տեղեկանում ենք, որ Երևանում կարող էր թատրոնասէրների մի օրինաւոր և ուժեղ խումբ կազմվել, որ կը կարողանար մշտական ներկայացումներ տալ, եթէ երկու միմեանց հակառակ կուսակցութիւններ յամառութեամբ չը շարունակէին ցանկանալ, որ անպատճառ իրանց միտքը իրագործվէր, իրանց կամքը կատարվէր։

Նոյեմբերի 11-ին, թէ մի ուրիշ օր, հաստատ չենք յիշում, Երևանի թատրոնական դահլիճում հաւաքվել են քսանից աւելի երիտասարդներ, մի թատրոնական խումբ կազմելու համար։ Ժողովի ժամանակ հարց է բարձրացել, թէ արդեօք ո՞ւմ օգտին պէտք է տրվեն ներկայացումները։ Ներկայ եղողների մի մասը, որ ինչպէս երևում է աւելի համբերող և զիջումներ անող է, կամեցել է, որ ներկայացումների եկամուտը երկու հաւասար բաժիններ անվի, մի բաժինը տրվի Սահականուշեան, իսկ միւսը Գայանեան օրիորդական դպրոցներին։ Միւս մասը, հայր Մելեանի կուսակիցները, պահանջել են, որ ամբողջ եկամուտը բոլոր ներկայացումներից տրվի միայն Գայանեան դպրոցին։ Ժողովը անբաւականութեամբ է վերջացել և հայր Մելեանը մնացել է մենակ իր կուսակիցներով, մի քանի թատրոնական գործին անծանօթ երիտասարդներով, որոնք արդէն սկսել են տալ իրանց ներկայացումները թատրոնական դահլիճում։

Մեր թղթակիցը տեղեկութիւն է տալիս այդ խմբի առաջին ներկայացման մասին, որ, ինչպէս կը տեսնի ընթերցողը, բաւական անաջող է անցել։

Նոյն թղթակիցը հաղորդում է, որ հայր Մելեանի կուսակցութեան հակառակ կուսակցութիւնը, նոյնպէս մի խումբ է կազմում, Զալալեան խումբ անունով, որ իր ներկայացումները կը տայ յօգուտ Սահականուշեան ուսումնարանի։

Ինչպէս տեսնում է ընթերցողը, Երևանում պէտք է այսուհետև գործեն թատրոնական երկու

այն աշխատասէրների թիւը, որոնք գոնէ ամիսը միանգամ յաճախում են դասախօսութիւն լսելու։ Նրանք աւելի շատ սովորում են այն տարերքից, որոնցմով տոգորված է Փարիզի մթնոլորտը։ Զբաղմունքները չափից դուրս շատ և բազմատեսակ են։ Կան բալեր, թատրոններ, ռեստորաններ, կաֆէներ և այլն։ Բայց մանաւանդ կնիկները նրանցից շատ ժամանակ են խլում։ Մեծ մասը ապրում է սիրուհու հետ։ Մի ամբողջ դաս աղջիկների, որոնք կոչվում են Լատինական թաղի կանայք, խիստ հետաքրքիր դեր են խաղում ուսանողների կեանքի մէջ։ Դրանք հասարակ գործաւոր աղջիկներ են, որոնք բանում են զանազան հիմնարկութիւնների մէջ, և ուսանողների սենեակներում ուրախութիւն ու հանգստութիւն են գտնում, երբ աշխատանքը ձանձրացնում էր նրանց։ Այդ մշտազուարթ, անհոգ և դարտակամիտ արարածները երբէք դուրս չեն գալիս ուսանողների աշխարհից, և անդադար անցնում են մէկ ձեռքից միւսը։

Ինչ որ աւելի յատկանիշ է ֆրանսիական ուսանողներին,—դա է նրանց արտաքին փայլը։ Փարիզը սաստիկ յդկում է և կոկում է նրանց։ Նրանք գերմանական ուսանողի նման անտաշ, անշնորք և դանդաղկոտ չեն, որոնց բոլոր արժանաւորութիւնները թաղված են դրսի սառն և ցամաք կեղևի տակ։ Փարիզի ուսանողը կատարեալ աշխարհային մարդ է իր բազմակողմանի ձևերի մէջ։ Նա խօսում է, դատում է ամեն բանի վրա, մինչև անգամ այն բաների վրա, որ ինքը չը գիտէ։ Նրա խելքը սաստիկ ճկուն է, դէպի ամեն կողմ ոլորվում է։ Նա վարում է խիստ բաղադրեալ վիճաբանութիւններ, և կարկտի նման թափում է խոշոր ֆրազներ։ Այդ նրանից է, որ նա կարդում է մեծ հեղինակների գրքերը, բոմանները, կարդում է լրագիրներ, գնում է թատրոն, ծանօթ է ամեն բանի հետ, ինչ որ կատարվում է նրա չորս կողմում։ Նա թէև հիմնաւոր գիտութիւն չունի, թէև խորին կրթութիւն չէ ստանում, բայց շուտով յափշտակվում է իդէաներով։

Ինչ որ վերաբերում է ընդհանուր գաղափարներին, մեծ մասը աղատամիտ և յառաջադիմականներ են, և պատկանում են հասարակապետական կուսակցութեան։ Այդ բաւական չէ, չատերը նրանցից երազում են համաշխարհական հասարակապետութիւն, երազում են ազգերի եղբայրութիւն, և չքաւորութեան վախճան։ Ազատութեան և արդարութեան իդէաները սաստիկ արբեցնում են նրանց։ Այսուամենայնիւ, ֆրանսիական ուսանողը պրոպագանդիստի ոգի չունի, որ մտնէր ընտանիքների մէջ, որ մտնէր ամբոխի մէջ, և առանց աղմուկի տարածէր իր մտքերը։ Նա իր նեղ, ուսանողական շրջանից դուրս չէ գալիս։ Օրինաւոր ընտանիքներում մինչև անգամ նրան չեն ընդունում։ Բայց երբ պատահում է մի ժողովրդական շարժում, երբ ծագում է մի քաղաքական յեղափոխութիւն, ուսանողները խլրտվում են, զարթնում են որպէս քնած առիւծ, և առաջինն են վազում, որ թնդեցնում են փողոցները մարսելիէզներով, փչրում են բռնակալների արձանները, և թափում են բարիկադների վրա։ Ով որ փոքր ի շատէ ծանօթ է ֆրանսիական պատմութեանը, գիտէ, թէ որպիսի մեծ դեր խաղացին ուսանողները 1830 և 1848 թուականներում, և մանաւանդ կոմմունայի ժամանակ։

Չէ կարելի ասել, թէ բոլոր ուսանողները Ֆրանսիայում հետևում են հասարակապետական կարծիքների։ Տակաւին կղերը և մանաւանդ եղուիտները մեծ ջանք են գործ դնում, որ իրանց մրտքերը անցկացնեն երիտասարդութեան մէջ. և այս պատճառով, նրանք սաստիկ եռանդով ձգտում են իրանց ձեռքը ձգել ուսումը և կրթութիւնը։ Եւ կարողացան յաջողացնել, Ֆրանսիայի զանազան դաւառներում պահպանելով բաւական ծաղկած դպրոցներ, և նոյն իսկ Փարիզում բաց անելով մի քանի ուսումնական հիմնարկութիւններ, այլ և մի կաթոլիկական համալսարան։ Այդ հիմնարկութիւնների ուսանողները ոչինչ կապ չունեն իրանց հասարակապետական ընկերների հետ, և ներկայացնում են սաստիկ ռէակցիա։ Բայց մի բան, որ ուրախալի է, այն է, որ այժմ Ֆրանսիայի ամենաբարձր մտածողները աշխատում են սահմանափակել կղերի իրաւունքները կրթութեան գործի մէջ։

Հայ ուսանողը ընկնելով Փարիզի քաղաքի մէջ, բոլորովին իր գլուխը կորցնում է։ Անթիւ կուսակցութիւններ, անթիւ կարծիքներ, և անթիւ ձգտումներ,—նա չը գիտէ, թէ որին պէտք է հետևել։ Վերջապէս աւելի զօրեղ հոսանքը նրան իր հետն է տանում։ Նա մոռանում է իր անձը, մոռանում է իր երկիրը, մոռանում է, թէ ինչ ազգի որդի է ինքը։ Նա էլ միտքը չէ բերում, թէ իր եղբայրները ինչ դրութեան մէջ են ապրում Տաճկաստանում, Պարսկաստանում, Ռուսաստանում և Հնդկաստանում.—սկսում է երազել ընդհանուր եղբայրութեան վրա։ Նա դառնում է կոսմոպոլիտ և ուրանում է իր հայութիւնը։ Որպէս վերևում յիշեցի, մենք չունենք շատ թուով ֆրանսիական ուսանողներ, իսկ այդ երևոյթը նշմարվում է Կ. Պոլսի երիտասարդների մէջ, որոնք դժբախտութիւն էին ունեցել մի քանի տարի Փարիզում թափառելու։ Զարմանալին այն է, որ Փարիզի ուսանողը իր ընդհանուր կոսմոպոլիտական հայացքներով հանդերձ, դարձեալ մնում է Ֆրանսիացի։ Նա առաջ սիրում է իր ազգը, իր հայրենիքը և աւելորդը միայն տալիս է օտարներին։ Բայց հայ ուսանողը մոռանում է բոլորը.... Սրտի և մտքի դատարկութեան մէջ միշտ տեղ են գտնում յիմար ցնորքներ....

Եւ վերջացրի իմ նկարագիրը Ռուսաստանի, Գերմանիայի և Ֆրանսիայի հայ ուսանողների մասին. հիմայ տեսնենք, ինչ են չինում նրանք, երբ վերադառնում են իրանց հայրենիքը և մտնում են կեանքի մէջ։

(Կը շարունակվի)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

—

Դառնանք դէպի ֆրանսիական ուսանողները։

Ֆրանսիայում հայ ուսանողները ընտրում են միայն Փարիզը։ Ես գոնէ, բացի մի բժշկից, չեմ ճանաչում ուրիշ ուսանողներ, որոնք Ֆրանսիայում մի քան սորված լինէին։ Բայց ճանաչում եմ շատ թերուսներ, որոնք երկար տարիներ Ֆրանսիայի մայրաքաղաքում թափառելէն յետոյ, առանց մի հիմնաւոր գիտութիւն սովորելու, վերադարձել են հայրենիքը, բերելով իրանց հետ միայն ֆրանսիական արտաքին փայլը, որ աչքի է զարկում կապկութեան բոլոր միմոսութիւններով։ Նրանում է, Փարիզը—այդ գիտութեան, յեղափոխութեան, մարսելիէզի և չռայլութեան մայրաքաղաքը—իր դրիզէտներով և կաֆէ-չանտաններով, բոլորովին կախարդում է, խելքից հանում է միամիտ հայ ուսանողին, երբ ընկնում է այդ համաշխարհական Բաբելոնի մէջ։ Փարիզը միջին կէտ չունի. նա միշտ պատրաստում է ծայրայեղ մարդիկ, կամ խոշոր հասարակական գործիչներ, կամ երևելի հանճարներ, և կամ չրջմոլիկ, աննպատակ շարլաթաններ։

Փարիզում Լատինական թաղը պատմական նշանակութիւն է ստացել որպէս ուսանողների բնակարան։ Նրա խուլ փողոցներով ոչ մի պատուաւոր կին իրան թոյլ չի տայ անց կենալ գիշերվայ 9 ժամից յետոյ, վախենալով, մի գուցէ հանդիպէ ուսանողների անպատկառ մի խումբի։ Փարիզի ուսանողները առհասարակ սակաւ են պարապում, խիստ փոքր է

խումբեր և մի և նոյն ժամանակ աշխատեն մէկը միւսին փնասել....

Մեր կարծիքով երկու կուսակցութիւններն էլ բոլորովին սխալ ուղղութիւն են բռնել և երկուսն էլ կարող են միայն փնաս հասցնել թէ տեղական դպրոցներին և թէ գլխաւորապէս թատրոնական գործին։

Որքան մենք ծանօթ ենք Երևանի կեանքի հետ, այնտեղի երիտասարդութիւնը գլխաւորապէս երկու տարրերից է բաղկացած. բարձր ուսում ստացածներից, որոնք բոլորովին ապահոված են, ուսուցիչներից և մանր ծառայողներից, որոնց այնքան դժուար է իրանց ապրուստը հայթհայթել, որ նրանք անկարող են ձրիաբար ծառայել որ և է գործին։

Առաջինները, մի քանի բացառութեամբ, գրեթէ բոլորովին չեն մասնակցում թատրոնական ներկայացումներին, իսկ երկրորդները, ինչպէս ասացինք, անկարող են ձրիաբար գործ առաջ տանել...

Այսպիսով, եթէ երիտասարդների մէջ մինչև անգամ երկպառակութիւն չը ծագէր, եթէ նոքա համաձայնէին եկամուտի գործադրութեան մասին, խումբը այնու ամենայնիւ մի քանի ներկայացումներից յետոյ, ինքն ըստ ինքեան կը քայքայվէր։

Փոխանակ վիճելու եկամուտի գործադրութեան մասին, փոխանակ երկու խումբեր կազմելու, փոխանակ ժողովուրդին ճանձրացնելու և գործը փչացնելու, մենք խորհուրդ կը տայինք պատուելի երիտասարդներին մի փոքր աւելի հեռատես լինել, միանալ, կազմել մի ընկերութիւն, մի թատրոնական ընկերութիւն, որ ներկայացումներից ստացված եկամուտը նոյն իսկ գործին ծառայեցնէին. վարձատրէին խաղացողներից, եթէ ոչ բոլորին, որ աւելի լաւ կը լինէր, գոնեա նրանց, որոնք վարձատրութեան պէտք ունեն, և որոնք մեր կարծիքով միակ են, որ կարող են, վարձատրված լինելով, գործը աջողութեամբ կատարել։ Բացի այդ թատրոնը ինքը շատ պէտքեր ունի, որոնց համար պէտք է ծախսեր անել. հարկաւոր է պիեսաներ ձեռք բերել, թարգմանել տալ, ըէպերտուար կազմել, գրիմի համար նիւթեր ունենալ, դեկօրացիաներ վերանորոգել, նոր դեկօրացիաներ նկարել տալ և այլն։

Թատրոնական ներկայացումները Երևանում կարող են աջողակ գնալ միայն այն ժամանակ, երբ եկամուտը նոյն իսկ թատրոնի պէտքերի վրա կը գործադրվի, իսկ եթէ ներկայացումները կը համարվեն ուսումնարանների եկամուտի աղբիւր, այն ժամանակ հասարակութիւնը կը զզվի նրանցից և նրանց մուրացկանութիւն կը համարի....

Թատրոնը և ուսումնարանը երկու այնպիսի հիմնարկութիւններ են, որոնցից իւրաքանչիւրի իր սեփական եկամուտ ունենալը անհրաժեշտ է, որոնցից իւրաքանչիւրը կարող է միւսին ծառայել, բայց ոչ իրրև եկամուտի աղբիւր։

Թող այս ճշմարտութիւնը հասկանան երևանցի պատուելի երիտասարդները։

Վ. Տ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Նոյեմբերի 17-ից Թիֆլիսի զինուորական նահանգական դատարանում քննվում էր և չարունակվեց մինչև նոյեմբերի 19-ը Տատո Յուլուկիձէի և նրա ընկերների գործը։ Այդ աւազակի անձնաւորութիւնը այնքան հռչակվեց այս վերջին 5—6 տարիներում իր կատաղի յարձակմունքներով և սպանութիւններով, որ աւելորդ չէր լինի մի քանի տեղեկութիւններ հաղորդել նրա մասին։ Նա, ինչպէս դատաստանական քննութիւնից յայտնվեցաւ, Թիֆլիսի մի հանքարի գլխաւորի յայտնվեցաւ, և ինչպէս ինքն Տատո Յուլուկիձէն յայտնեց, նա դերձակ է եղել։ Մի քանի տարի առաջ նա բաղաքանում մի փոքր խանութ է ունեցել, ուր վաճառելիս է եղել թաշկինակներ և այլ սրա նման բաներ։ Ասում են որ նա մինչև անգամ գիմնազիայում սովորելիս եղել և մինչև 3-րորդ դասատունն է հասել, բայց յայտնի չէ թէ ինչ պատճառով արտաքսվել է գիմնազիայից։ Թէ որ տարուց է սկսել նա աւազակութեամբ պարապել, դատաստանական քննութիւնը չէ կարողացել իմանալ. այսքանը միայն յայտնի է որ Յուլուկիձէն իր խմբի հետ միասին 5—6 տարվայ ընթացքում 15 յափշտակութիւններ է արել վիրաւորանքով և սպանութիւններով։ Իսկ զինուորական դատարանում քննվող գործը 16-երորդն է։ Տատո Յուլուկիձէի երեսի գծագրութիւնը մի առանձին տիպական յատկութիւն չունի. եթէ բանից տեղեկութիւն չունեցող մարդու առաջ կանգնեցնենք Տատո Յուլուկիձէին, նա չէ էլ կարող հաւատալ որ այդքան սարսափելի գործեր կատարել է այդ գունատ երիտասարդը, որովհետև նրա երեսի գծագրութիւնը ոչ խիստ և կատաղի, և ոչ էլ աւազակային է, այլ, ընդհակառակն, շատ մեղմ է։ Զինուորական նահանգական դատարանի դահլիճում գտնվում էր և Տատո Յուլուկիձէի մայրը։ Դատաստանական քննութեան բոլոր ժամանակա միջոցում մեծ բազմութիւն լցնում էր դատարանը. նոյնպէս մեծ բազմութիւն հասարակ ժողովրդի սպասում էր դատարանի չինութեան առաջ թէ աւազակներին տեսնելու և թէ դատարանի վճիռը իմանալու համար։

—

Կովկասեան զինուորական նահանգական դատարանում երեք օր կարգով, այն է նոյեմբերի 17, 18 և 19-ին քննվում էր Թիֆլիսի քաղաքացի Տատո Յուլուկիձէի, և Ալէքսօ Ղազարովի, Քութայիսեան նահանգի գիւղացի Գիւորգի Գվէլիսիանի և բոլոր իրաւունքներից զրկված Պետրոս Օրբէլօվի գործը, որոնք մեղադրվում էին 1877 թվին Թիֆլիսում Տէր-Թոմասովի վրա յարձակվելու գործում, և բացի դրանից, պօլիցիային զինուորված ընդդիմադրութեան և պօլիցիական ծառայող Դիկանովի սպանութեան մէջ։ Ատեանը խորհրդակցում էր ուղիղ երեք ժամ, որից յետոյ դուրս բերեց հետևեալ վճիռը։ Մեղաւոր են ճանաչված աւազակութեան մէջ Տատո Յուլուկիձէն և Գվէլիսիանի, բացի դրանից Յուլուկիձէն մեղաւոր է ճանաչված պօլիցիային ընդդիմադրութեան և պօլիցիական սպանութեան մէջ, բայց ոչ ուղիղ սպանելու դիտաւորութեամբ։ Վճռված է՝ Յուլուկիձէին մահուան պատժի ենթարկել կախաղան բարձրացնելով, իսկ Գվէլիսիանին մինչև մահը տաժանակիր աշխատութիւններին ենթարկել։ Իսկ մնացած երկու մեղադրվածներին՝ Ղազարովին և Օրբէլովին այս գործում անմեղ ճանաչել։ Դատավճիռը վերջնական ձևով կը յայտնվի նոյեմբերի 27-ին, առաւօտեան 10 ժամին։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Լսում ենք որ մեր հարուստ քաղաքացի պ. Ղ. Ղազարեանը կամենում է ոգի կանգնեցնել Կօնդի Սահականուշեան օրիորդական դպրոցը։ Նա մտադիր է այդ հիմնարկութիւնը տեղափոխել քաղաքի կենտրոնը մի յարմարաւոր տեղ, իր քսակից հոգալով թէ ուսուցիչների ռոճիկը և թէ այլ տնտեսական պիտոյքները։»

—

ՍՂՆԱԽԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղ էլ սկսվել է թանգութիւն։ Ալիւրի պուդը ծախվում է 2 ր. 40 կ., գարին 1 ր. 50 կ., մսի ֆունտը 8 կ. և այլն։ Գները օրէցօր բարձրանում են։ Մեր գիւղացիները իրանց ամբարներում մեծ քանակութեամբ ցորեն ունեն պահած, յուսալով որ գները աւելի կը բարձրանան։

—

Մեզ հաղորդում են ՍՂՆԱԽԻՑ, որ այնտեղ բացվելու է քաղաքական բանկ և մի արական պրոգիմնազիա, որի համար միջոցներ են որոնում։ Սղնախցիների մէջ մեռած է ազգասիրական ոգին։ Ամեն տեղ կատարեցին հանգ. Ս. Նազարեանի և Լազարեանի հոգեհանդիստը, իսկ սղնախցիները չը մտածեցին այդ անել։ Ամեն տեղ նուիրատուութիւններ հաւաքվեցան «Արարատեան» ընկերութեան համար, սղնախցիները ոչինչ չը տուին։ Տեղացիներից մեծ մասը թղթախաղով և քէֆով է զբաղված։

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Քաղաքիս հարիւրամեակին քաղաքագլուխ Մ. Կարապետեանը կարդաց ռուսաց լեզուով նախիջևանցոց գաղթականութեան համառօտ տեսութիւնը, որ գեղեցիկ գրված էր և որի հայերէն թարգմանութիւնը երևի կը յայտնվի, իսկ մեր տաղանդաւոր բանաստեղծ պ. Ռ. Պատկանեանը մի համառօտ, բայց գեղեցիկ ճառ կարդաց և գրեց Նոր-Նախիջևանի պատմութեան միջակ բովանդակութիւնը սկզբից մինչև մեր օրերը, որ շուտով կը հրատարակվի առանձին գրքոյկով։»

—

Մեզ գրում են ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ, որ երիտասարդ Կ. Զօրչոփեանը շատ օգնեց Ամբրոսիոս վարդապետին Նախիջևանի հարիւրամեակի օրը նուիրատուութիւններ հաւաքել Էրզրումի երկրագործական (?) ուսումնարանի համար։ Խնջոյքի դահլիճի մէջ հաւաքվեցաւ 450 ր., իսկ ընդամենը Նախիջևանի մէջ 620 ր.։ Սառորդութիւնը շարունակվում է։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՊՈՑՏ ՏԵՏՐԱԿ

—

«Կարելի է որ Կ. Պօլսոյ նախարարական վերջին փոփոխութիւնը տէրութեանց դեսպաններուն ոչչափ անհաճոյ ալ երևցած լինի, ներկայ կացութեան մէջ քիչ մը բարոքում յառաջ բերէ։—Նոր նախարարք Սուլթանին բարեկամ անձինք են. և եթէ Վեհապետն իրապէս ունի այն զգացումները զորս մեր դեսպանն իրեն վերագրած է Դամասկոսի բանակոսութեանը մէջ, կրնայ յոյս մը լինիլ թէ Սուլթանն իւր կամքը կատարելու պատրաստ նախարարութիւն մ'ունենալով, առիթ պիտի ունենայ արդեամբ ապացուցանել իւր բարի դիտաւորութիւնները։ Խայրէտինի կամ Միտհաթի պէս նախարարներուն՝ Սուլթանն երբէք մտերմութիւն և վստահութիւն չէր ցուցներ։ Անոնց ազդեցութիւնն ու անկախ բնաւորութիւնն անվստահելի ըրած էին զիրենք Սուլթանին, և հետևաբար շարունակ արգելքներու կը հանդիպէին այնպիսի ջանից մէջ, որք Թերևս յաջողէին՝ եթէ նախաձեռնութիւնը Սուլթանին կողմէ լինէր։ Բայց այժմ կըսուի թէ նախարարական վերջին փոփոխութեան ամենահաւանական բացատրութիւնն այս է որ Սուլթանն հաստատապէս միտքը դրած էր ամբողջ գործոց վարչութիւնն այնպիսի անձանց յանձնել, որք կատարելապէս անձնուէր լինին իրեն և հետևաբար իւր հրամանները գործադրեն միշտ։ Ժամանակը միայն պիտի կրնայ հաստատել թէ անգլիական դեսպանին լաւատեսութիւնն իրաւացի է թէ ոչ, և դժբաղդաբար արդէն շատ ժամանակ անցած է Սուլթանին խոստումները տրուելէն ի վեր։ Սակայն այժմ դարման տանելու համար ուշ չէ, և եթէ դարման տանելու ժամանակն իրապէս եկած է, մեք ուրախ լինելէ և քիչ մը ժամանակ ևս համբերելէ զատ ուրիշ բան չեմք կրնար ընել։ Ըստուգիւ խիստ ցաւալի է ամիս ամսոյ վրա սպասել այնպիսի բարենորոգմանց գործադրութեան, որք շատ ժամանակ առաջ խոստացուած էին, մանաւանդ երբ բարենորոգմանց հարկն այսչափ ստիպողական է և դարմանն այնչափ յայտնի. բայց տարի մը, և մինչև իսկ երկու տարին կարճ ժամանակ մ'է միայն ազգի մը կեանքին մէջ, և տակաւին իրական բան մ'եղած չը լինելուն պատճառաւ բոլորովին յուսահատելու իրաւունք չունիմք։ Ամբողջ Թուրք տէրութիւնն այնպիսի տաղնապ մ'անցուցած է, որ անպատճառ մահաբեր կը լինէր արևմտեան տիպ ունեցող սովորական կառավարութեան մը։ Կը յուսամք որ քանի՞ ժամանակ անցնի և վերջին պատերազմին վնասները դարմանուին, Դուռն ոչ միայն Անգղիոյ, այլ նաև եւրոպական միւս տէրութեանց կողմանէ իրեն եղած յանձնարարմանց համաձայն պիտի գործէ։

«Անօգուտ չը լինիր եթէ այս առթիւ Անկլօ-Թուրք պայմանագրին իրական նշանակութիւնն յիշեցնեմք։ Այդ պայմանագրին վրա երբեմն այնպէս կը խօսուի, որ իբր թէ Փոքր Ասիոյ մէջ իրապէս Բրիտանական թեւարկութիւն մը հաստատած լինէր, որ Սուլթանին վեհապետութեան գոնէ մէկ մասը կը ջնջէ։ Սուլթանը կարողութիւն չունի իւր պարտականութիւնները գործադրելու, կըսեն, ուստի մեր պարտքն է հարկ եղած բարենորոգումները ներմուծել։ Եթէ ընդունիմք թէ պատճառն ուղիղ է, եզրակացութիւնն այնպէս չէ, և ստուգիւ Անկլօ-Թուրք պայմանագրին ոչ տառն և ոչ ալ իմաստը չեն հաստատեր այդպիսի եզրակացութիւն մը։ Անգղիացոց համար, որք կառավարական հզուագիւտ կարողութիւն մ'ունենալու համարումն ունին իրենց վրա, և որոց այդ կարողութիւնը թէ Եւրոպիոյ և թէ Ասիոյ կողմն իրենց դրացիք ևս կը խոստովանին, ըստուգիւ խիստ ցաւալի է տեսնել որ հարուստ, բարեբեր և պատմական երկիր մը, այն է Ասիական Թուրքիա, կաւերի և կը յետադիմէ պարզապէս սա պատճառաւ որ բարոք կառավարութեան տարրերը չունի։ Այդ երկրին վերածնութիւն տալու գործը, կըսեն, խիստ դիւրին է, լաւ գործ մ'է, և մեզ համար ալ օգտակար է. ինչո՞ւ ձեռք չը զարնեմք այդ գործին։—Բազում պատճառներ կրնան յառաջ բերուիլ ապացուցանելու համար թէ պէտք չէ որ այդ գործին մեք ձեռնարկեմք, բայց երկու պատճառ միայն յիշել բաւական է։ Նախ, վասն զի այդ գործին ձեռք զարնելու ոչ իրաւունք և ոչ ալ կամք ունիմք։ Անկլօ-Թուրք պայմանագիրն այդպիսի իրաւունք մը չը տար մեզ, և Անգղիոյ ժողովուրդն իւր կայսերական պատասխանատուութիւններն աւելցնելու տրամադիր չէ այժմ։ Մեք՝ ինչպէս մեր պարքն է՝ կրնամք համակրիլ անոնց որք յոռի վարչութեան և հարստահարութեան ներքև կը հեծեն. բայց եթէ այդ համակրութեան պատճառաւ հարկ է մեր վրա առնուլ ամեն այն երկիրներու վարչու-

թիւնն որք զէշ կը կառավարուին, ասոր վերջը չը գար։

«Ասկից զատ, չը կրնար ըսուիլ թէ Փոքր Ասիոյ միակ յոյսն արևմտեան վարչութեան վրա կը կայանայ։ Մեր այս աւուր թղթակիցն, որ Փոքր Ասիոյ վրա իրապէս անգլիական թեւարկութիւն մը հաստատելու հարկը կը փաստաբանէ, այնպիսի խօսքեր կրսէ որք իւր դատին հակառակն հաստատելու կը ծառայեն աւելի։ Գաւառական Թուրքն ի բնէ խիստ հլու և հանդարտ լինելով, կրսէ, փոքր վարչութեան մը միայն պէտք ունի։ Միայն երկու բան պէտք են, կրսէ, Փոքր Ասիոյ վերածնութեան համար. այն է կենաց ու ընչից ապահովութիւն և լաւ ուղիներ։ Բայց այս բաները միթէ անհնա՞ր են Թուրք կառավարութեան ներքև։ Նամակագիրը կընդունի թէ՝ իւր փորձով հասկնալ կրցածին չափ՝ Թուրք պաշտօնատարք խելացի և բարեսիրտ մարդիկ են. և թէպէտ ապրելու համար կաշառք կուտեն, այսու ամենայնիւ պարկեշտ լինելու մեծ փափաք ունին, և թէ Թուրքն աւելի կազմաւորելու և նախաձեռնութիւն ընելու անկարող է՝ քան թէ կառավարելու։

«Ահա Անգլօ-Թուրք պայմանագիրն այդ տեսութեամբ շինուեցաւ։ Այդ պայմանագիրն անգլական դեսպանին և հիւպատոսաց իշխանութիւն տուաւ լաւ առաջարկութիւններ ընելու, խորհուրդներ տալու, հսկելու, և միով բանիւ, գրեթէ «վազմաւորելու և նախաձեռնութիւն ընելու». և միւս կողմէն գործադիր իշխանութիւնը Թուրքաց՝ և վեհապետութիւնը Սուլթանին ձեռքը թողուց։ Իրաւ է որ մինչև ցարդ իրական արդիւնք մը չունեցաւ, թէև Մեծ-Նպարքոսին տեղեկութիւն ստանալու համար գաւառական կառավարչաց ստիպողական հրամաններ ղրկելը կրնայ նշան մը լինիլ թէ Դրան ազդութիւնը կը զարթնու։ Այս պատճառաւ, և ուրիշ հաւասարապէս լաւ պատճառներով, առ այժմ չեմք կրնար այդ պայմանագիրն իբրև մեռեալ տառ նկատել, և քանի որ նա իրական պարտականութեան ու խոստման մը հանգամանքը պահէ, յայտնի է թէ Բրիտանական վարչական հովանաւորութեան նման բան մը բոլորովին դուրս է անոր նպատակէն և անհամաձայն է անոր պարունակութեանց։»

(Մասիս 27 հոկ.)

«ՄԱՍԻՍԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՏՐԱՊԻԶՕՆԻՑ ՀՈԿՏ. 18-ԻՑ

—

Այս քանի մ'անգամ է որ Ձեր Կարնոյ թղթակիցն և ընդհանրապէս բոլոր լրագիրք կը գանգատին կայսերական Քօմիսէրներուն անգործութենէն. ասոր պատճառն իմանալու համար կարծեմ աւելորդ չէ Ձեր ընթերցողաց պատմել հետևեալը, որ թէ առաջին Քօմիսէրին տրամադրութիւններն և թէ Դրան խոստումներն ու գործերը լաւ երևան կը հանէ։ Երբ գաւառիս կուսակալ Եուսուֆ փաշան Կարնոյ գաւառին համար առաջին Քօմիսէր կը կարգուի և օտար լրագիրներէ կը իմանայ թէ սաստիկ ստիպողականութիւն կը տրուի բարենորոգմանց գործին, յետին ծայր մոռանալութեան մէջ կընկնի թէ ինք ինչպէս կարող պիտի ըլլայ գործել, և անհամբեր հրահանգաց գալստեան կը սպասէ։ Երբ վերջապէս կընդունուի զանոնք, առանց հետևեալ օրուան սպասելու բոլոր գիշերը կը նստի ու կը կարդայ, և հետևեալ օրը իւր մէկ մտերիմին կը յայտնէ թէ փառք Աստուծոյ գործադրութիւն չը կայ, այլ քննութիւն և տեղեկագրութիւն, ալ բան չունի նէ, ժողովուրդը բարենորոգում թող սպասէ։

Գաւառիս այժմու կուսակալ Ղազի Սրրի փաշան այցելութեան ելած է գաւառին զըլխաւոր քաղաքները։ Լսեցինք թէ Թիրէպօլու գանուող Լազ գաղթականք շատ լաւ ընդունելութիւն չեն ըրեր կուսակալին՝ իրենց թայինը կտրելուն համար, այնպէս որ Սրրի փաշան ստիպուեր է քաղաքէս զօրք կանչել բարեկարգութիւնը պահպանելու համար։

Արդարութեան նորոգ ընտրեալ պաշտօնեաները քաղաքս ալ հասան երկու ամիս կայ, առաջին ամիսը պարապ անցաւ Բամազանի պատճառաւ, երկրորդն ալ նոյնպէս սենեակներու բաժանման և շինութեան պատճառաւ։ Թէև ուշ՝ այլ զոհութեան արժանի գործողմը սկսաւ դատարանաց Մուֆէթիշն իւր պաշտօնը, այն է պաշտօնանկ ընելով Թէմիզի որ այժմ Պիտայէթ կը կոչուի, պաշքեաթիպն ու միւսթանթիքն, որք քաղաքիս մէջ նշանաւոր էին իրենց անկարգութեամբք..։ Այս պաշտօնանկութիւնը մեծ զոհութիւն պատճառեց ոչ միայն Քրիստոնէից՝ այլ և Մահմետականաց. սակայն ուրախութենէն ու զոհութենէն աւելի մեծ եղաւ բոլոր Տրապիզոնցւոց զարմանքն ու զայրոյթն, երբ նոցա վերահաստատութիւնը լսուեցաւ։ Միւֆէթիշը՝ կամ քննութիւն բացաւ, կամ ոչ զանոնք պաշտօնանկ ընելու համար. եթէ քննեց՝ հարկաւ ձշմարտութիւնը իմացաւ. եթէ չը քննեց, ինչպէս պաշտօնանկ կընէ։ Դարձեալ այդ երկու պաշտօնեայները կամ յանցաւոր էին, կամ ոչ, եթէ չէին ինչո՞ւ պաշտօնանկ եղան. եթէ էին՝ ինչո՞ւ վերահաստատուեցան։ Ո՞վ պիտի տայ ասոնց պատասխանը.—Բանիմաց ընթերցողը։

Թէև անագան՝ այլ իբր գաւառական ժամանակագիր պարտիմ իմացնել Ձեր ընթերցողաց թէ բարձրաշնորհ Խրիմեան Սրբազան ամսոյս 6-ին քաղաքս հասաւ և արժանավայել պատուով ընդունուեցաւ։ Հետևեալ օրը, ինչպէս նաև ուրիշ երկու օրեր ժողովրդեան քարոզց իրեն ընտանի ոճովը։ Եթէ Հայրիկ հոգևորապէս մխիթարեց զժողովուրդը, ժողովուրդն ալ չը մոռացաւ նիւթապէս մխիթարել զՀայրիկն։ Սէր և անոր յարակից պարտքը փոխադարձ եղան։ Ժամանելուն 10-րդ օրը մեկնեցաւ աստի ի Կարին, ուր արդէն հասած լինելու է։ Խրիմեան Սրբազան չը մոռացաւ այցելել ազգային վարժարանն և քաջալերել երկսեռ ուսանողներն, առ այս ուսնեցած սիրոյն ի յիշատակ վարժարանին նուիրեց իւր երկերէն 35 հատոր։ Այս մասին բոլոր ուսանողաց շնորհակալիքն հրապարակաւ յայտնելը պարտք կը համարիմ։ Շնորհակալութիւն նաև Ս. Երուսաղէմայ միաբան Արժ. Խապայեան Տ. Սահակ վարդապետին որ վարժարանը այցելելով բարեհաձեցաւ Երուսաղէմ տպեալ 19 հատոր այլ և այլ գրքեր նուիրել։

Ձեր պատուական լրագրոյն հոկտեմբեր 6-ի թուոյն մէջ Վագրթի մէկ հատուածը կը թարգմանէք, յորում ըսուած է թէ Բ. Դուռն օտար թղթատարութեանց ջնջումը պիտի պահանջէ։ Ըստ իս ամենևին հարկ չը կայ այդ պահանջման, քանի որ Օսմանեան թղթատարութիւնը թղթատարական միութեան մանակից է և օտար թղթատարութիւններէն աժան գնով կընդունի նամակները, բաւական է որ ժողովուրդը վստահութիւն ունենայ թէ իւր տուած նամակները պիտի չը կորսուին կամ ուրիշի մը ձեռք պիտի չանցնին։ Իմ ըսածս փորձով ալ տեսնուեցաւ։ Երբ Օսմանեան միջազգային թղթատարութիւնը հաստատուեցաւ, ի սկզբան այնքան նամակ չէր ընդուներ. բայց երբ տեսնուեցաւ թէ անոր յանձնուած նամակները իրենց տեարց ձեռքը կը հասնին, հետզհետէ աւելցան և ալ աւելի պիտի աւելնան եթէ այդ վարչութիւնը գաւառներուն համար ալ պատասխանատու հրատարակէ ինքզինք։ Ուստի խնդիրը միայն վստահութիւն արտադրելուն վրայ է։

Քաղաքիս մէջ չորս այլ և այլ թղթատարութիւնք կան, Օսմանեան, Ֆրանսական, Աւստրիական և Ռուսական։ Օսմանեանը պարզ նամակի մը համար 40 փարա կը պահանջէ, մինչդեռ միւսները 60 փարա, այսու ամենայնիւ Տրապիզոնի բոլոր վաճառականաց նամակներն ընդհանրապէս վերջին երեք թղթատարութեանց միջոցաւ կը փոխանակուին. ինչո՞ւ համար, քանի որ %ին 50 տարբերութիւն կայ գնոց միջև.—վասն զի վերջինները աւելի կանոնաւոր, աւելի ապահով և աւելի արագ են։ Այստեղի Օսմանեան թղթատարութեան պաշտօնէից անհոգութիւնը զարմանալի է, զոնէ միւս երեքներուն օրինակէն չեն խրատուիր. եթէ մանանխոյ հատի չափ ազգային նախանձ ունենային, գործերը բոլորովին ուրիշ կերպարանք կառնուին։ Այստեղ եթէ մարդ ներկայ չը գտնուի Օսմանեան թղթատարութեան ցրուելուն, ապահով է որ իւր նամակը, կամ լրագրաց ծրարը կը կորսուի, վասն զի բաց պատուհանի մ'առջև մաղի մը մէջ դրուած են անոնք, և ով որ ուզէ՝ կրնայ ուզած նամակը կամ լրագիրն առնուլ. ոչ ոք հսկող կայ, ոչ ոք իմացող կայ։ Այսպիսի դէպքեր հազուագիւտ չեն։ Գոնէ թղթատարութեան մէջ բարեկարգութիւն հաստատուի, այդ ալ միթէ ստակի կարօտ է, քանի որ այնքան պաշտօնեայներ կան և օրինակն ալ մեր աչաց առջև է։ Մեզի ամօթ չէ՞ որ մեր երկրին մէջ մենք աւելի օտարներուն վստահինք քան մեզի։ Ուրիշ ո՞ր երկրի մէջ նմանօրինակ բան մը տեսնուած է։

«ՄԱՍԻՍԻ» ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԷՐԶՐՈՒՄԻՑ ՀՈԿՏ. 13-ԻՑ

—

Քօմիսէրները քանի մը օրէն Խնուս երթալով՝ անտի պիտի գնան 'ի Մուշ և ապա Բաղէշ ու Վան։ Զօրք կը պատրաստուին որպէս զի Քօմիսէրներուն ընկերանան և ճանբան ձերբակալեն ծանուցեալ նշանաւոր չարագործներն ու ոճրագործները, և հետերնին Վան տանելով դատաստանի ենթարկեն։

Կարնոյ անգլական հիւպատոսն այսօր շըտապաւ մեկնեցաւ 'ի Դարաքիլիսէ յԱլաշկերտ, իւր հայ թարգմանին հետ, հարստահարութեանց և շփոթութեանց մօտէն տեղեկանալու և կառավարութեան գրելու համար։ Կարնոյ առաջնորդարանէն ևս գրուեցաւ առ առաջնորդն Յովհաննէս վարդապետ, որ հիւրասիրէ Նորին Վսեմութիւն, և ժողովուրդն 'ի համբերութիւն յորդորէ։

Սամիհ փաշա կը հեռագրէ առ Վալին թէ քրդական ապստամբութիւնը զսպուելու վրա է. իսկ ես գիր առի Պաշգալէէն, թէ Շատախցի և Հէքեարցի Հայք և Ասորիք Ռուսիա գաղթելու վրա են։ Իսկ Ապաղայի Մուսա աղան զՀայս ևս գրգռելով իւր ապըստամբութիւնը կը շարունակէ տէրութեան դէմ գործելով, ինչպէս Պայազիտէն առ Տ. Վահան վարդապետ տեղեկագրուած է։

Վալին տեղեկագրած էր Բ. Դրան թէ գաղթական Թէրէքէմէները Տէրսիմի մէջ հաստատուին։ Այս անգամ Բ. Դուռը կը գրէ թէ Տէվրիշ փաշան իբր փորձառու դիտած է որ դոքա եթէ 'ի Տէրսիմ հաստատուին, կը կոտորուին զինեալ քրդերէն, ուստի լաւ ևս է որ դոքա բնակին խաղաղ (Հայաբնակ) գաւառներու մէջ։ Վալին Խարէի ժողովով վերստին գրեց թէ նահանգիս ժողովուրդն արդէն անհնարին անձկութեան մէջ է, և թէ սոքա ևս զինեալ լինելով, եթէ Տէրսիմի զըսպեալ կողմերը հաստատուին, կրնան գործնական դասեր տալ Տէրսիմցւոց և յոյժ օգտակար լինիլ տէրութեան։

Դերջանայ առևանգեալ աղջկանց հարցուփորձը կը շարունակուի. աղջիկներն Իսլամանալու մասին կը պնդեն, որպէս զի թէ՛ զիրենք առևանգողք և բռնաբարողք ազատին օրինաց տրամադրած պատիժէն և թէ իրենք իրենց ամօթը ծածկեն իսլամութեամբ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Պարսկաստանից մեզ հաղորդում են, թէ Ատրպատականի բոլոր գաւառներում տիրում է հացի սաստիկ թանգութիւն. պատճառը այս տարվայ սաստիկ երաշտութիւնն էր։ Կառավարութիւնը ամենևին հոգ չէ տանում սպառնացող սովի առաջն առնելու համար, այլ ընդհակառակ, գաւառապետներից շատերը իրանց մասնաւոր օգտի համար նպաստում են հացատէրերին, որ աւելի թանգ գնով վաճառեն։ Իսկ ժողովուրդի յուսահատութիւնը մինչև վերջին ծայրը հասնելով, այլ ևս ուշադրութիւն չէ դարձնում ոչ կարգի և ոչ դիսցիպլինայի վրա և հրապարակաւ յարձակվելով ցորենի ամբարների վրա, կատաղաբար յափշտակում է։ Ուրմիայ քաղաքում յափշտակել են մի հայ կարուածատիրոջ ամբարները և քարկոծել են գաւառապետին։

—Կ. Պոլսից մեզ հաղորդում են, որ վերջապէս Զէյթունցի հայերի ցանկութիւնը կատարվեցաւ, այն է Զէյթունի գայմագամ նշանակվեցաւ հալէպցի հայ վաճառական Քօսայեան էֆէնդին։ Այդ լուրը մի կողմից ուրախալի է, բայց միւս կողմից տխրալի է, որովհետև Զէյթունը երկար ժամանակ կառավարվում էր իր հայ իշխաններով, որոնք տէրութեանը տալիս էին մի որոշեալ հարկ, իսկ գայմագամ նշանակելով, Թիւրքաց տէրութիւնը դրանով խլելով զէյթունցիներից նրանց վաղեմի արտօնութիւնները, միանգամայն իր անմիջական իշխանութեան ենթարկեց այդ երկիրը։ Որովհետև կարելի է արդեօք հաւատալ, որ Բ. Դուռը այսօր Զէյթունի մէջ հայ գայմագամ նշանակելով, մի քանի ամսից յետոյ չի փոխի և նրա տեղը մի Թիւրք չի նշանակի։ Ի՞նչով է ապահովացրած մըշտական հայ գայմագամի հաստատութիւնը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՍՕՖԻԱ, 15/27 նոյեմբերի։ Ազգային ժողովը, ձայների մեծամասնութեամբ, որոշեց գահական ճառի դէմ մի պատասխանական ադրէս ներկայացնել, որի մէջ նա կասկած է յայտնում մինիստրութեան մասին. այս պատճառով մինիստրութիւնն էլ հրաժարական տըուեց։ Իշխանը յանձնեց Կարավէլովին, որ նա ազատամիտներից և աւանդապահներից մի նոր կաբինէտ կազմակերպի։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 նոյեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր. 25 կ., երկրորդ 92 ր. 75 կ., երրորդ 93 ր. 75 կ., չորրորդ 94 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակն արժէ 229 ր. 50 կ., երկրորդ 224 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակն արժէ 90 ր. 65 կ., երկրորդ 90 ր. 75 կ., ոսկի 7 ր. 84 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 25,36 պէնս. ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա արժէ 213 մարկ 50 պֆ., Փարիզի վրա 264 ֆրանկ 50 սանտիմ։ Տրամադրութիւնն ամուր է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 նոյեմբերի։ «Правит. Вѣстн.» լրագրի դեկտեմբերի 17-ի համարում տպված է, որ Թագաւոր Կայսրը կէսօրից յետոյ ժամը 3-ին դուրս եկաւ Լիվադիայից և ժամը 11-ին հասաւ Սիմֆէրօպոլ։ Գիշերվայ ժամը 12-ին Նորին Մեծութիւնը Լօզովօ-Սէվաստօպոլեան երկաթուղով ուղևորվեց դէպի Մոսկվա։ «Голосъ» լրագիրն իր 319-որդ համարում տպված ֆէլիետօնի առիթով երրորդ նախազգուշութիւն ստացաւ, և հինգ ամով արգելվեցաւ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 նոյեմբերի։ «Молва» լրագիրը հաղորդում է, որ զինուորական նահանգական դատարանը վճռեց Միրսկիին կախել, Տարխօվին 12 տարով և 4 ամով տաժանակիր աշխատանքներին ենթարկել, իսկ մնացեալ մեղադրվածներին դատարանը արդարացրեց։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ОБЪ ИЗДАНІИ ГАЗЕТЫ

„ТИФЛИССКІЙ ВѢСТНИКЪ“

въ 1880 году.

Съ 1-го ноября будущаго 1880 года **„Тифлисскій Вѣстникъ“** будетъ издаваться **ЕЖЕДНЕВНО, не исключая** ни понедѣльниковъ, ни послѣпраздничныхъ дней, при участіи нынѣшняго состава Редакціи.

Вслѣдствіе увеличенія числа номеровъ газеты, подписная цѣна на газету нѣсколько измѣняется. Годовая подписка назначается: въ Тифлисѣ (съ доставкою на домъ)—12, съ пересылкою по Имперіи—13, съ пересылкою по почтовому союзу—18 руб.

СРОКИ.	Въ Тифлисѣ съ доставкой.		По Импери.		По почтовому союзу.	
	рубли.	коп.	рубли.	коп.	рубли.	коп.
На 12 мѣсяцевъ	12	—	13	—	18	—
„ 6 „	6	50	7	—	9	50
„ 4 мѣсяца	4	50	5	—	7	—
„ 3 „	4	—	4	50	5	50
„ 1 мѣсяцъ	1	50	2	—	2	50

Иногородные адресуютъ свои требованія въ Тифлисъ, въ редакцію **„Тифлисскаго Вѣстника“.**

Въ Тифлисѣ подписка принимается, кромѣ конторы газеты (Эриванская площадь, д. № 3), въ газетномъ агентствѣ Шавердова.

Կենտրոնական Գրավաճառանոցում Դվորցովոյ փողոցի վրայ, Արծրունու Գալլերէյում վաճառվում են հետևեալ նոր գրքերը:

1. *Կարմիր լապտեր, փոքրիկ մանկանց ընթերցանութեան համար. Թարգ. օր Ն. Տէր-Մարկոսեանի պատկերազարդ և կազմած.* գ. — ր. 50 կ.
2. — *Նոյնը առանց կազմի.* — » 30 կ.
3. *Թաւամազ մեղու՝ փոքրիկ մանկանց ընթերցանութեան համար. Թարգ. օր Ն. Տէր-Մարկոսեանի. պատկերազարդ և կազմած.* — » 40 կ.
4. *Եղբայր և քոյր մանկական վէպ. Թարգ. Զ. Մսերեանի պատկերազարդ* — » 30 կ.
5. *Հսկայական ձեռքեր. մանկական վէպ, Թարգ. Զ. Մսերեանի, պատկերազարդ* — » 10 կ.
6. *Փարոս Հայաստանի. պատկերազարդ հանդէս ընտանեկան ընթերցանութեան համար.* 1 — կ.
7. *Թորոս աղբար Հայաստանի ճանապարհորդ. Գործ. Գ. Վ. Սրուանձտեանց* 1 » 25 կ.
8. *Երկունք լիներորդ դարու. գործ Ծերենցի.* 1 » — կ.
9. *Պատանեկան ներշնչումներ, գործ. Հրանտ Աստուրի.* — » 60 կ.
10. *Մի կաթիլ արտասու, զոր կը հեղու Սիսակ Հայ մելիքին վրայ* — » 35 կ.
11. *Սամուէլ Մուրատեանի կտակի խնդիրը, դատախօսութիւն Ս. Արծրունու.* — » 50 կ.
12. *Ուսումնարանի առողջապահութեան հարցեր, բժ. Ա. Բաբայեանի* 1 » — կ.
13. *Մարմնակազմական կամ անատոմիկական բառարան Լատինէրենից և Ռուսերէնից Հայերէն. բժ. Լ. Տիգրանեանցի* 1 » — կ.
14. *Կրօնք. հոգեբանական հետազօտութիւն Ս. Մանդենեանի* 1 » — կ.
15. *Հայկական թատրոն. Վուդէքի իմ վեչեր, ֆարս երեք պատկերով գործ. Մ. Տէր Գրիգորեանցի* — » 40 կ.
16. *Բեքեր բիձու հանաքը. Օպերետա մի գործողութեամբ, Թարգ. Ն. Լալայեանցի* — » 25 կ.
17. *Աշնանային երեկոյ գիւղում, վոդեվիլ մէկ արարուածով, փոխադրութիւն Գ. Շահբուդաղեանի* — » 25 կ.
18. *Բռնի ամուսնութիւն. կոմեդիայ մէկ արարուածով, Թարգ. Գ. Զմշկեանի* — » 40 կ.
19. *Ժանո և Ժանէտ օպերա-վոդեվիլ, Թարգ. Գ. Շահբուդաղեանցի մէկ գործողութեամբ* — » 40 կ.
20. *Պէպօ. կոմեդիա երեք արարվածով, գործ. Գ. Սունդուկեանի* — » 30 կ.
21. *Պառաւներին խրատ. վոդեվիլ մէկ արարվածով Մ. Տէր Գրիգորեանի* — » 50 կ.

Նոյն տեղը վաճառվում են ամենայն տեսակ դասագրքեր Հայերէն, Ռուսերէն և օտար լեզուների, դասական պեսոյքներ ուսումնարանների և աշակերտների համար, Հայերէն, Ռուսերէն և Գաղիերէն վիպասանութիւններ, ամենայն հասակի ընթերցանութեան և գիտութեան զանազան ճիւղերին վերաբերեալ գրքեր. պատուէրները կատարվում են ամենայն արագութեամբ: Օտարաքաղաքացիք իրանց պահանջները պէտք ուղարկեն հետևեալ հասցէով.

„Въ Тифлисъ. Въ центральную книжную торговлю“

5—6

ОТКРЫТА ПОДПИСКА

на 1880 годъ

НА ЕЖЕДНЕВНУЮ, БЕЗЦЕНЗУРНУЮ, ПОЛИТИЧЕСКУЮ И ОБЩЕСТВЕННУЮ ГАЗЕТУ

„РУССКІЙ КУРЬЕРЪ“

Газета будетъ выходить ежедневно, въ форматѣ нашихъ большихъ газетъ, по слѣдующей програмѣ: постановленія и распоряженія правительства; телеграммы, обзоръ политическихъ событій и общественной жизни; обсужденіе вопросовъ дня; военныя извѣстія; мнѣнія русской и иностранной печати по данному вопросу и сущность руководящихъ статей; иностранныя извѣстія по русскимъ и заграничнымъ источникамъ; извѣстія изъ славянскихъ земель. Жизнь Россіи: наши домашнія дѣла; корреспонденціи; народное образованіе; внутреннія извѣстія; хроника; хроника научная, литературная и художественная: театральныя и музыкальныя извѣстія; судебная хроника. Историческій листокъ; разныя извѣстія; биржевыя, желѣзно-дорожныя, торговыя и др. свѣдѣнія; справочныя извѣстія.

Подписная цѣна съ пересылкой и доставкой въ Москвѣ и на города:

На годъ	6 руб.
„ полгода	4 „
„ 3 мѣсяца	3 „
„ 1 мѣсяцъ	1 „

За границу плата вдвое.

ПОДПИСКА ПРИНИМАЕТСЯ: въ Москвѣ, въ конторѣ редакціи газеты „РУССКІЙ КУРЬЕРЪ.“ Столешниковъ пер., д. Рожнова; въ конторѣ изданія газеты—у Москворѣцкаго моста, въ д. **Н. П. Ланина**, въ его конторѣ, и у всѣхъ извѣстнихъ книгопродавцевъ Москвы въ С.—Петербургѣ—въ книжномъ магазинѣ Исакова и картографическомъ заведеніи Ильина.

Гг. иногородные благоволятъ адресовать свои требованія исключительно въ контору изданія газеты „РУССКІЙ КУРЬЕРЪ“—Москва, Москворѣцкій мостъ, домъ Ланина, при его конторѣ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

բոլոր եւրոպական լրագիրների համար Մոսկվայում (Центральная контора объявленій для всѣхъ европейскихъ газетъ въ Москвѣ, Большая Дмитровка, д. Бучумова) ԸՆԴՈՒՆՈՒՄ Է *յայտարարութիւններ* ԲՈԼՈՐ *ռուս և արտասահմանեան* ԼՐԱԳԻՐՆԵՐԻ *համար խմբագրական* ԳՆԵՐՈՎ, *նշանաւոր զիջումներով:*

Ռուսաց ամենօրեայ, շաբաթական, պատկերազարդ և ծաղրական լրագիրների ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ: ԱՄԵՆՕՐԵԱՅ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ *ունի բոլոր ռուսաց և արտասահմանեան* ԼՐԱԳԻՐՆԵՐԻ *հետ: Յայտարարութիւններ ընդունվում են նոյնպէս բոլոր գաւառական լրագիրների համար: Թարգմանութիւնները ՃՐԻ են լինում: Իւրաքանչիւր յայտարարութեան համար* ԱՊԱՅՈՒՅԱԿԱՆ № *է ուղարկվում:*

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՆՎԱՐՁ ԵՆ ԿԱՋՄՎՈՒՄ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ *ընդունվում է բոլոր լրագիրների համար:*

4—15 (4)

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ

ՄԵԾԱԴԻՐ ԵՒ ՓՈՔՐԱԴԻՐ

ՕՐԱՑՈՅՑՔ

1880 Թ.

Հանդերձ չորս նոր հետաքրքրական պատկերներով

և

Ծաղիկ ընտանեաց ե. տ. յաւելուածով: Որովհետև մենք արդէն բացեցինք Երևանում սեփական տպարան, ուստի մեր ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ *կը լինեն պատրաստ* ԴԵԿՏԵՄԲԵՐԻ *մէջ:*

Գումարով գնողաց զիջումն կը լինի: Մեր տպարանում ընդունվում են չափաւոր գներով ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆՔ:

Մեր հասցէն՝ въ Эривань

А. Гуламирянцу. *Աբգար Գուլամիրեանց*

4—5

ԹԻՖԼԻՍԻ ԲՈԼՈՐ ՀԱՅ ԳՐԱՎԱՃԱՌՆԵՐԻ

ՄՕՏ ԾԱՆՈՒՄ ԵՆ՝

—

Երկու Բարեկամ. գործ Օտտակար Ըսուպպիացի . . . . . գ. է 25 կ.

Բընէ՝ վէպ Ֆրանց Հօֆմանի. գ. է 40 կ. *ապագրութեան համար արդէն պատրաստ է Ֆրանսիական մատենագիր Էմիլ Գաբորիոյի «Լէկօք» վէպը, որ բաղկ. է 450 երեսից:*

Պատրաստվում տպագրութեան համար Շէկսպիրի «Օտտէլօ» ողբերգութեան հայ թարգմանութիւնը:

1—5

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ *յայտնում է, որ իր ներկայութեամբ լինելու են հետևեալ վճռական աճուրդները առանց կրկնաճուրդի. 1) Նոյեմբերի 24 Հալաբարի քաղաքային ամարանոցի մի բաժինը 1890 դեսեատին մեծութեամբ և մի ուրիշ բաժինը 257 դեսեատին մեծութեամբ կապալով տալու: Ժամանակամիջոցը 1880 թ. յունվարից մինչև 1883 թ. յունվար: 2) Դեկտեմբերի 7 (1879 թ.) Կուր գետի վրա քաղաքի գծի մէջ բերվող գերանների եկամուտի ընտանալը կապալով է տրվելու: Ժամանակամիջոցը 1880 թ. յունվարի 26-ից մինչև 1883 թ. յունվարը: 3) Դեկտեմբերի 7-ին 1879 թ. Վերայից վերև գտնված նաւը կապալով տալու համար: Ժամանակամիջոցը 1880 թ. յունվարի 26-ից մինչև 1883 թ. յունվարը: 4) Դեկտեմբերի 4-ին 1879 թ. կառապաններից ստացված եկամուտը կապալով տալու համար: Ժամանակամիջոցը 1880 թ. յունվարից մինչև 1883 թ. յունվարը: 5) Դեկտեմբերի 1-ին 1879 թ. ձիաներից յոգուտ քաղաքի ստացված մուտքը կապալով տալու ժամանակամիջոցը 1880 թուականի յունվարի 1-ից մինչև 1883 թուականը: 6) Դեկտեմբերի 5-ին 1879 թ. քաղաքային կշիռքից ստացված եկամուտը կապալով տալու համար: Ժամանակամիջոցը 1880 թ. յունվարի 26-ից, մինչև 1883 թ. յունվարի 1-ը: Այս բոլոր կապալների պայմանները ցանկացողները կարող են տեսնել քաղաքային վարչութեան մէջ ամեն օր, բացի տօն օրերից առաւօտեան 10 ժամից մինչև 2-ը կէս օրից յետոյ:*

2—9

Մի երիտասարդ, որ երկար ժամանակ լվեր պարապել է պրատիկայով, կամենում է մանաւոր ընտանիքներում կամ ուսումնարաններում կրկնութիւններ անել զիմնազիական բոլոր առարկաներից: Հասցէն հարցնել «Մըշակի» խմբագրատանը:

Дозволено Цензурою 20 Ноября 1879 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона